

ՀՈԴՎԱԾՆԵՐ



ՀՀ ՂԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Գ. Ս. ՂԱԶԻՆՅԱՆ

Մինչ օրս ընթացող դատաիրավական բարեփոխումների մեկնարկը տրվեց 1995 թվականի Սահմանադրությամբ, երբ ընդհանուր գծերով կանխորոշվեցին իրավական համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքերը: Իբրև արդյունք՝ արմատական վերափոխման ենթարկվեց ՀՀ դատաիրավական համակարգը՝ առաջնահերթ խնդիր ունենալով երաշխավորել անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Որպես շարունակական գործընթաց՝ դատաիրավական բարեփոխումներն ուղղված են նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի՝ ՀՀ իրավական համակարգում աստիճանական ներդրման ապահովմանը: Այդ գործընթացն առավել կարևորվեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի¹ և դրան կից արձանագրությունների վավերացմամբ: Արդյունքում եվրոպական իրավական արժեհամակարգը դիտվեց այն հիմնական ուղենիշը, որը կանխորոշեց դատաիրավական համակարգի հետագա զարգացումը: Սակայն իրականացված դատաիրավական բարեփոխումների առաջին փուլի արդյունքները ցույց տվեցին, որ բարեփոխումների իրականացման ընթացքում անհրաժեշտ խորությամբ չուսումնասիրվեցին դատական իշխանության տեսական հարցերը և այդ ոլորտում այլ երկրների կուտակված փորձը: Դրանով պայմանավորվեց 2005 թ. սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը, որից հետո առաջնակարգ խնդիր դարձավ եվրոպական արժեհամակարգին համապատասխանող դատաիրավական համակարգի ձևավորումը:

Դատաիրավական համակարգի սպասվող վերափոխման նոր ալիքը դեռևս իրավական ամրագրում չի ստացել, սակայն ակնհայտ է, որ այն պետք է միտված լինի արդեն իսկ ձևավորված օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցակարգերի կատարելագործմանը: Թե որքանով նշված բարեփոխումները կհասնեն սպասվող արդյունքին, կախված կլինի դրանց հետևողական, գիտականորեն հիմնավորված և համակարգային իրականացումից:

Սակայն հստակ է, որ նման զարգացումն ինքնանպատակ չէ և պետք է դիտվի որպես մարդու իրավունքների պաշտպանության որակապես նոր, առավել գործուն մակարդակի հասնելու անհրաժեշտ գրավական:

¹ Ընդունվել է 1950թ. նոյեմբերի 4-ին, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2002թ. ապրիլի 26-ին:

Դատաիրավական համակարգում եվրոպական չափանիշների հաջող ներդրումը մեծապես կկանխորոշի հասարակության վերաբերմունքը դատարանների, իրավապահական մարմինների և ընդհանրապես իրավունքի նկատմամբ: Արդյունքում՝ հասարակական կյանքում տեղի կունենան այնպիսի խորքային փոփոխություններ, որոնց դժվար է հասնել առանց նշված ոլորտի հարաբերությունների արմատական վերաբժևորման:

Եվրոպական արժեքների հետևողական ներդրումը հատկապես կարևոր նշանակություն է ստանում քրեական դատավարությունում, քանի որ մարդու իրավունքների տեսանկյունից այդ ոլորտն օբյեկտիվորեն առավել զգայուն է: Բացի այդ, քրեական դատավարություն իրականացնող պետական մարմինները ունեն տասնամյակների ընթացքում արմատավորված ինստիտուցիոնալ և գործառնական ավանդույթներ, որոնցից ձերբազատվելը այնքան էլ հեշտ չէ:

Քրեական դատավարությունում եվրոպական չափանիշներն այն արժեքներն են, որոնք ապահովում են ժողովրդավարական հասարակությունում մարդու իրավունքների պաշտպանությունը՝ առանց վնասելու հանցավորության դեմ տարվող պայքարում պետության քրեական քաղաքականության իրականացմանը: Այլ խոսքով, սրանք այն պահանջներն են, որոնք ապահովում են քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի համաչափությունն այն հաշվով, որպեսզի չխաթարվի հասարակության վստահությունը պետական համակարգի և մասնավորապես արդարադատության նկատմամբ, անձի իրավունքները սահմանափակվեն միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է պետական համապատասխան մարմինների կողմից իրենց առջև դրված խնդիրները լուծելու, այն է՝ հանցավորության դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար:

Եվրոպական չափանիշների ներդրումը բարդ և բազմակողմանի գործընթաց է: Այն կարող ենք դիտարկել երկու հարթությամբ՝ օրենսդրական և կիրառական: Եվրոպական չափանիշների օրենսդրական ներդրումը ՀՀ նորմատիվային համակարգի (առաջին հերթին՝ օրենսդրության) համապատասխանեցումն է իրավունքի ոլորտում եվրոպական երկրների հավաքական դրական փորձին: Մինչդեռ եվրոպական չափանիշների կիրառական ներդրումը հասարակական հարաբերությունների իրական համապատասխանեցումն է եվրոպական արժեհամակարգին:

Հետևաբար, եվրոպական չափանիշների առկայությունը կարելի է գնահատել հարաբերականորեն ինքնուրույն այնպիսի տարրերի միասնության մեջ, ինչպիսիք են առաջադրվող որոշակի պահանջները և դրանց իրագործման կառուցակարգերը: Նշված երկու հարթությունների փոխհարաբերակցության վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

Առավել դյուրին է գնահատել օրենսդրական վերափոխման գործընթացը, քան օրենսդրության կիրառման պրակտիկան, քանի որ առաջին դեպքում առկա են համադրելի օբյեկտիվ չափանիշներ, մինչդեռ երկրորդ դեպքում վիճակագրական տվյալները կարող են ինքնին վիճահարույց լինել կամ չարտահայտել իրականությունը:

Օրենսդրական բարեփոխումները եվրոպական չափանիշների գործնական ներդրման միջոց են: Ուստի օրենսդրության կատարելագործման գործընթացը չի կարող համարվել ինքնանպատակ:

Եթե օրենսդրական բացը լրացնելը կարճատև տեխնիկական խնդիր է, ապա իրավակիրառական պրակտիկայի վերափոխումը համակարգային, տարողունակ և շարունակական լուրջ ջանքեր է պահանջում:

Այսպիսով, եվրոպական չափանիշներին համապատասխան օրենսդրության առկայությունն ինքնին անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ նշված չափանիշներին համահունչ քրեական դատավարություն ունենալու համար: Չթերագնահատելով պատշաճ օրենսդրության անհրաժեշտությունը, առավել կարևորվում է դրա կիրառումը, քանի որ անգամ կատարյալ օրենսդրության պայմաններում քրեական դատավարությունը հեռու կլինի ժողովրդավար լինելուց, եթե չսպահովվի նշված չափանիշներին համապատասխան կիրառություն: Անգամ օրենքի բացակայությունը կամ վատ օրենքը կարող է ավելի ընդունելի լինել, քան իրավական օրենքի կամայական, իրավիճակային, սխալ կիրառումը, քանի որ օրենքի խախտման թույլատրելիության գաղափարի արմատավորումը կարող է շատ ավելի լուրջ բացասական հետևանքներ ունենալ հասարակության սոցիալ-հոգեբանական կյանքում, քան վատ օրենքի պահանջների կատարման հետևանքով առաջացող առավել տեսանելի վնասները:

Անդրադառնալով եվրոպական չափանիշների ներդրման օրենսդրական մակարդակին՝ հարկ է նշել, որ ինչպես ՀՀ սահմանադրության՝ քրեադատավարական գործունեությանը վերաբերող դրույթները, այնպես էլ քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած նորմերն ընդհանուր առմամբ համապատասխանում են մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշներին: Այսպես, 1998 թ. քրեական դատավարության օրենսգրքով սահմանվեցին դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը, մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարրեր, անձի կալանավորման հարցը լուծելու դատարանի բացառիկ իրավասությունը, կալանավորման հիմքերի և պայմանների սպառնիչ շրջանակը՝ որպես անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի հիմնական տարրեր և այլն:

ՀՀ քրեական դատավարության բարեփոխումների հետագա ընթացքը ևս ուղղված էր ՀՀ օրենսդրության մեջ եվրոպական չափանիշների շարունակական ներդրման ապահովմանը: Օրինակ՝ իրավաբանական օգնության իրավունքի ապահովման առումով կարևոր նշանակություն ունեցավ փաստաբանի ներկայությամբ վկայի հարցաքննության իրավունքի ամրագրումը:

Ասվածը, սակայն, չի նշանակում, որ եվրոպական չափանիշների ներդրման տեսանկյունից քրեադատավարական օրենսդրությունը հետագա կատարելագործում չի պահանջում, թեև օրենսդրական բացթողումներն ու թերությունները լուրջ խոչընդոտ չեն կյանքում եվրոպական չափանիշները կենսագործելու համար: Մյուս կողմից, **եվրոպական չափանիշներին համապատասխանող քրեական դատավարության առկայությունը հիմնականում օրենսդրական բարեփոխումներով պայմանավորելը երկրորդական պլան է մղում հիմնական խնդիրը՝ նշված արժեքների գործնական իրացումը:**

Օրենքի որակի համեմատությամբ դրա կիրառման առավել մեծ կարևորությունը կարող ենք ներկայացնել մեկ վառ օրինակով. մեր երկրում

ընտրական օրենսդրության շարունակական բարեփոխումները չհանգեցրին ընտրական գործընթացի բարելավման, մինչդեռ Հայաստանի պատմության մեջ լավագույն ընտրություններն անցկացվել են անհամեմատ վատ ընտրական օրենսգրքի պայմաններում:

ՀՀ դատական համակարգում արդար դատաքննության իրավունքի իրացման մոնիտորինգի² արդյունքները վկայում են, որ հաճախ դատարանները, հիմնվելով օրենքի կամայական կամ սխալ մեկնաբանության վրա, անտեսում են օրենսդրության հիմքում դրված եվրոպական չափանիշները, դրանով իսկ քրեական դատավարության ոլորտում հայտնված անձանց զրկելով իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից: Մասնավորապես, թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը մեղադրյալին և նրա պաշտպանին իրավունք է վերապահում միջնորդություններ հարուցել վկաներ հարցաքննելու, փորձաքննություններ (այդ թվում՝ լրացուցիչ և կրկնակի) նշանակելու կամ փորձագետներ հարցաքննելու վերաբերյալ, այնուհանդերձ, դիտարկված դեպքերի մոտ քսան տոկոսում պաշտպանության կողմը իրականում զրկված է եղել այդ իրավունքի իրականացման հնարավորությունից³:

Դիտարկված դեպքերի շուրջ մեկ երրորդում դատարանն ըստ էության հանդես գալով մեղադրանքի կողմում, ամբաստանյալի մեղքի ապացուցման պարտականությունը դրել է պաշտպանության կողմի վրա, անտեսել մրցակցություն ապահովելու և միայն իրավունքի շահերը արտահայտելու իր պարտականությունը: Պաշտպանի հրավիրման, նշանակման, փոխարինման, պաշտպանից հրաժարվելու, ինչպես նաև պաշտպանի պարտադիր մասնակցության հետ կապված հարցերի դիտարկման ընթացքում արձանագրվել են քրեադատավարական օրենքի մի շարք էական խախտումներ, ինչի հետևանքով ամբաստանյալները զրկվել են անձամբ կամ ընտրած պաշտպանի միջոցով իրենց պաշտպանելու իրավունքից: Դիտարկված ութսուն դեպքից տասնիննում պաշտպանության կողմը զրկված է եղել ամբաստանյալի դեմ ցուցմունք տված անձանց հարցեր տալու իրավունքից, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր չորրորդ ամբաստանյալի համար անցկացված դատաքննությունն արդար չի եղել⁴:

Ի հեճուկս արդար դատական քննության գաղափարի և մրցակցության սկզբունքի, իրավակիրառ պրակտիկայում շարունակում են հանդիպել դեպքեր, երբ մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը հրապարակվում է ոչ թե մեղադրողի, այլ դատավորի կողմից:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ դատաիրավական համակարգը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու գերխնդիրը իրավակիրառ պրակտիկայի արմատական վերափոխումն է:

Եվրոպական չափանիշներին օրենքի կիրառման որակի համապատասխանությունը պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոններով: Նախ և առաջ մնան կիրառությունը պայմանավորված է

² Տե՛ս Արդար դատաքննության իրավունքի իրացումը ՀՀ դատական համակարգում (Մոնիտորինգի արդյունքներ), Եր., 2009:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 124:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 123:

ինչպես իրավակիրառողի և առաջին հերթին դատավորների այնպիսի անձնային հատկանիշներով, ինչպիսիք են վերջիններիս կրթական մակարդակը, մարդկային որակներն ու այդ չափանիշներն ընկալելու ունակությունը, այնպես էլ դատարանի ինստիտուցիոնալ անկախությամբ: **Ուստի ապագա բարեփոխումները պետք է ուղղված լինեն նախ և առաջ իրավակիրառողի արժեհամակարգի վերափոխմանը:**

Այս առումով նպատակահարմար ենք համարում անդրադառնալ դատաիրավական բարեփոխումների համատեքստում իրավաբանական կրթության որակի բարելավման անհրաժեշտությանը: Իրավական համակարգերի մերձեցման պայմաններում նոր, եվրոպական արժեհամակարգին համապատասխանող իրավամտաժողովրդյան ձևավորումը պետք է դիտվի ժամանակակից իրավաբանական կրթության գերխնդիրը: Ապագա իրավակիրառողին այս արժեքների ներարկումն անհրաժեշտ է սկսել դեռևս ուսանողական նստարանից, քանի որ ապագայում, նույնիսկ ամենաբարձր չափանիշներին համապատասխանող օրենսդրության առկայության պայմաններում, իրավակիրառ ոլորտում գավառական մտածողությունը թույլ չի տա հասնելու նախանշված նպատակներին, որքան էլ դրանք վեհ և արժեքավոր լինեն, որքան էլ մեծ լինի դրանց հասնելու ցանկությունը:

Այս պայմաններում իրավաբանական կրթությունը չպետք է դիտարկվի միայն որպես կրթական գործընթաց: Իրավաբանական կրթության որակը հասարակական կյանքի կարևորագույն ոլորտների զարգացումը, այդ թվում՝ դատաիրավական բարեփոխումների հաջողությունը կանխորոշող լուրջ գործոն է: Մինչդեռ մեր երկրում ծավալվող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում մասնագիտական-կրթական գործոնն ի սկզբբանե անտեսվել է, որը նույնպես խանգարել է բարեփոխումների հաջողությամբ իրականացմանը:

Դատաիրավական բարեփոխումների շրջանակներում մասնագիտական կրթությանն ուշադրություն դարձնելու առաջին փորձ կարելի է համարել ՀՀ Դատական դպրոցի հիմնումը: Սակայն մեր իրականության մեջ նորույթ հանդիսացող այս ինստիտուտն այս ձևով, այս պայմաններում և այս կարճ ժամանակահատվածում չէր կարող հասնել շոշափելի արդյունքի:

Կարծում են՝ կրթական ոլորտի բարեփոխումներին անհրաժեշտ է առավել համակարգված մոտեցում ցուցաբերել: Մասնավորապես, միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ անհրաժեշտ է առանձին իրավական ակտի կամ հայեցակարգի ընդունմամբ իրավական պատշաճ կանոնակարգման ենթարկել նշված իրավաբանական կրթության ոլորտում ծագող հարաբերությունները, ժամանակակից պահանջներին համապատասխանեցնել ուսումնական գործընթացը, պատրաստել տեսական հարուստ գիտելիքներ և գործնական հմտություններ ունեցող իրավաբաններ:

Մեր իրավաբանական կրթօջախները պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն մասնագիտական դասընթացների կառուցվածքի բովանդակային վերանայմանը: Անհրաժեշտ է նպաստել գործնական ուղղվածություն ունեցող, ուսանողների մոտ մասնագիտական հմտություններ ձևավորող դասընթացների տեսակարար կշռի ավելացմանը: Այդպիսի դասընթացների շնորհիվ մեր իրավաբանական կրթությունը կարող է դուրս գալ չափազանց տեսականացված լինելու մտահոգիչ վիճակից:

Այսպիսով միանշանակ է, որ եվրոպական արժեհամակարգին համապատասխան կիրառություն կարող է ապահովել միայն բանիմաց, մարդկային բարձր հատկանիշներով օժտված և այդ արժեքները կրող իրավակիրառողը:

Սակայն, թեև յուրաքանչյուր դեպքում օրենքի փաստացի կիրառողը կոնկրետ անձ է, սակայն իրավակիրառ գործունեության ընթացքն ու արդյունքը պայմանավորված են ոչ միայն վերջինիս անձնային հատկանիշներով, այլև նրա սոցիալական միկրոմիջավայրից և ընդհանրապես հասարակությունից բխող ազդակներով: Քրեադատավարական օրենսդրության պատշաճ կիրառումը պայմանավորված է նրանով, թե որքանով է հասարակությունը պահանջատեր՝ ունենալու նման կիրառություն: Հասարակական պահանջի բացակայության պարագայում, նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում նորմալ կիրառության ապահովումը կդառնա գրեթե անհնար:

Դա է պատճառը, որ նշված խնդրի արդյունավետ լուծումը պահանջում է համակարգային բարեփոխումներ հասարակական կյանքի քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական, բարոյահոգեբանական ոլորտներում՝ զուգորդված դրանց համարժեք ինստիտուցիոնալ լուծումներով: Մինչդեռ, վերջին տարիներին ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերափոխումների վերլուծությունը հիմք է տալիս կատարելու ոչ լավատեսական ընդհանրացումներ: Մասնավորապես, թե՛ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպաստեղծ կարգավիճակի ամրագրումը (2006-2007 թթ. փոփոխություններով) և թե՛ վերադարձը սովորական դատական ատյանի կարգավիճակին (2008 թ. փոփոխություններով) հիմնավորվում էին ՀՀ վճռաբեկ դատարանի կարգավիճակը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Սակայն թե՛ առաջինը և թե՛ երկրորդը գրեթե չնպաստեցին նախանշված խնդիրների լուծմանը: Դա հետևանք էր այն բանի, որ եվրոպական չափանիշներին համահունչ իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առաջին հերթին պայմանավորվում էր ոչ թե հասարակական կյանքում իրականացվելիք արմատական փոփոխություններով, այլ ընդամենը դատական համակարգի կառուցվածքային և ֆունկցիոնալ վերափոխումներով:

Դատաիրավական համակարգի բարեփոխումների գործընթացի հաջողությանը նպաստող առաջնային գործոններից է քաղաքական իշխանության գիտակցումը, որ անկախ դատական համակարգը պետականության զարգացման առաջին և ամենակարևոր գրավականն է: Դատական համակարգի անկախության հռչակումը ոչ մի արժեք չի ունենա, եթե գործադիր իշխանությունը չիրաժարվի դատական իշխանության նկատմամբ ունեցած լծակներից և չապահովվի վերջինիս իրական անկախությունը: **Քաղաքական իշխանությունը պետք է գիտակցի այն պարզ իրողությունը, որ անկախ դատական իշխանություն ունենալուն այլընտրանք չկա:**

Չնսեմացնելով ինստիտուցիոնալ կառուցակարգերի դերն ու նշանակությունը, որին, ինչպես նշեցինք, ուղղված են եղել մինչ օրս իրականացված դատաիրավական բարեփոխումները, այնուամենայնիվ **նորմալ կիրառություն կարող է ապահովվել միայն մեր երկրում հասարակական արժեհամակարգի փոփոխության, հասարակական պահանջի և քաղաքական կամքի առկայության պայմաններում:**

Եվրոպական չափանիշների ճիշտ կիրառումն ապահովելու գործում զգալի է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես իրավակիրառական պրակտիկայի միասնականությունն ապահովելու՝ սահմանադրական առաքելությունն ունեցող բարձրագույն դատական ատյանի դերը: Վճռաբեկ դատարանը պետք է եվրոպական չափանիշների կիրառման հարցում ոչ միայն օրինակ ծառայի, այլև իր նախադեպերում լայնորեն անդրադառնա դրանց ճիշտ ընկալման և կիրառման մեթոդաբանությանը:

Վերջին խնդիրը հույժ կարևոր է՝ հետևյալ պատճառներով:

Նախադեպային իրավամտաժողովությունը դեռևս խորթ է հայրենական իրավաբանական տեսության և պրակտիկայի համար, մինչդեռ եվրոպական չափանիշների կեցության ձևը հիմնականում Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներն են:

Իրավակիրառական պրակտիկան դեռևս լիովին չի ընկալում մեր իրավական համակարգում մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական մեխանիզմի կարգավորիչ դերը: Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշները հաճախ դիտարկվում են որպես ներպետական օրենսդրությանը զուգահեռ գործող նորմատիվային համակարգ, որն ինքնաբավ նշանակություն ունի մարդու իրավունքների սահմանափակումներ նախատեսելու հարցում: Այլ կերպ՝ հնարավոր է, որ կոնկրետ սահմանափակումը օրենսդրությամբ սահմանված չլինի, բայց իրավաչափ համարվի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա: Մինչդեռ նման սահմանափակումների կիրառումը իրավական համարվել չի կարող, քանի որ իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգը լրացական է և չի կարող նախատեսել մարդու իրավունքների առավել լայն սահմանափակումներ, քան նախատեսված է ազգային օրենսդրությամբ:

Ստրասբուրգյան դատարանի նախադեպային իրավունքը չպետք է դիտարկվի որպես որոշ ձևականություններ պարտադրող համակարգ: Եվրոպական դատարանը չի զլանում կրկնել, որ իրեն հետաքրքրում են ոչ թե տեսակային և պատրանքային, այլ իրական և կիրառելի իրավունքները⁵: Այս պայմաններում որոշակի երաշխիքների ձևական տրամադրումը դեռևս չի ապահովում եվրոպական չափանիշների կենսագործումը: Մասնավորապես, *Ստերինգի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի՝ որպես մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող իրավական ակտի առարկան և նպատակը պահանջում են, որպեսզի նրա երաշխիքները այնպես մեկնաբանվեն և կիրառվեն, որպեսզի դրանք լինեն իրական և արդյունավետ...: Բացի այդ, երաշխավորված իրավունքների և ազատությունների ցանկացած մեկնաբանություն պետք է համապատասխանի Կոնվենցիայի ոգուն՝ իբրև իրավական ակտի, որի նպատակն է ժողովրդավարական հասարակության գաղափարների և արժեքների ապահովումն ու զարգացումը⁶:

⁵ Տե՛ս Արտիկոն ընդդեմ Իտալիայի (*Artico v. Italy*, 13.05.1980), կետ 33:

⁶ Տե՛ս Ստերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Soering v. United Kingdom*, 07.07.1989), կետ 87:

Եվրոպական չափանիշները չեն կարող ընկալվել որպես ստատիկ, քարացած երևույթ, այլ իրենցից ներկայացնում են «կենդանի գործիք», որոնք զարգանում և ժամանակի իրավաբանական պահանջներին համապատասխանեցվում են հենց նախադեպային ակտերում: Այդ է պատճառը, որ մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող շատ հարցեր, որոնք նախկինում եվրոպական չափանիշների շրջանակից դուրս էին, այժմ գտնվում են նախադեպային իրավունքի կարգավորման ոլորտում: Գրանով Անդամ պետությունների հայեցողության շրջանակը շարունակ նեղանում է:

Մասնավորապես, 1988 թվականին *Շենկն ընդդեմ Շվեյցարիայի* գործով կայացրած վճռում դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը, բայց չի սահմանում ապացույցների՝ որպես այդպիսին թույլատրելիության որևէ կանոն, քանի որ դա ներպետական իրավունքի խնդիրն է⁷: Սակայն հետագայում դատարանը որոշակիորեն մեղմեց նման կարծիք մոտեցումը, որն արտացոլվեց 1997 թվականին *Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդերլանդների* գործով դատարանի վճռում: Գատարանը, մասնավորապես, նշեց. «Գատարանը կրկնում է, որ ապացույցների թույլատրելիությունը հարց է, որը *հիմնականում* (ընդգծումը իմն է - Գ.Բ.) կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ և, որպես կանոն, հենց ներպետական դատարաններն են կոչված գնահատելու ներկայացված ապացույցները: Ըստ Կոնվենցիայի՝ դատարանի խնդիրն է ոչ թե գնահատել վկաների ցուցմունքները, այլ համոզվել, որ դատաքննությունն արդարացի է եղել, ներառյալ և այն, *թե ինչպես են ստացվել ապացույցները*»⁸ (ընդգծումը իմն է - Գ.Բ.): Արդեն 2007 թվականին, օրինակ, *Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների* գործով Եվրոպական դատարանն իրականացրել է ապացույցների մանրամասն հետազոտում⁹:

Այսպիսով, եվրոպական չափանիշների լույսի ներքո ՀՀ իրավական համակարգում ընթացող դատաիրավական բարեփոխումների գերխնդիրն իրավակիրառ պրակտիկայի արմատական վերափոխումն է: Այն կարող է հաջողությամբ իրագործվել միայն հասարակական կյանքի քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական, բարոյահոգեբանական ոլորտների վերափոխման շնորհիվ՝ զուգորդված դրանց համարժեք ինստիտուցիոնալ լուծումներով:

Г. С. КАЗИНЯН — Судебно - правовые реформы в свете европейских стандартов. — Статья посвящена текущему процессу реформирования судебной власти и ее соответствию европейским ценностям. Автор рассматривает необходимость проведения реформы судебно-правовой системы, особенно в уголовно-процессуальной сфере, с учетом того, что последовательное внедрение европейских ценностей

⁷ Տե՛ս Շենկն ընդդեմ Շվեյցարիայի (Schenk v Switzerland 12. 07. 1988), կետ 46:

⁸ Տե՛ս Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդերլանդների (Van Mechelen and Others v. Netherlands 23.04.1997), կետ 50:

⁹ Տե՛ս Ռամսահայն ընդդեմ Նիդերլանդների (Ramsahai and Others v. the Netherlands 18.10.2006):

получает особое значение именно в этой области, поскольку она наиболее уязвима с точки зрения прав человека. Кроме того, за последние десятилетия в деятельности органов, осуществляющих уголовный процесс, сложились устоявшиеся институциональные и функциональные традиции, избавление от которых — длительный и сложный процесс.

В статье процесс судебно-правовой реформы рассматривается в совокупности двух таких относительно самостоятельных составляющих, какими являются законодательство и правоприменительная практика.

При наличии надлежащего законодательства наиболее важным представляется его применение, так как даже в условиях совершенного законодательства уголовный процесс будет далек от демократичности, если соответствующее применение указанных стандартов не будет обеспечено.

На основе анализа правоприменительной практики автор выявляет существующие недостатки и лежащие в их основе институциональные, морально-психологические, политические, социально-экономические причины.

Особое внимание в статье уделено повышению качества профессионального образования с точки зрения совершенствования правоприменительной практики. В этом плане автор придает важное значение более систематизированному подходу в сфере реформы юридического образования. В частности, с учетом международного опыта предлагается урегулирование отношений, возникающих в сфере юридического образования путем принятия соответствующего правового акта, приведение учебного процесса в соответствие с требованиями времени.

В результате исследования автор приходит к заключению, что успешное завершение судебно-правовой реформы невозможно без изменений в политической, социально-экономической, образовательной, морально-психологической сферах общественной жизни, сопровождающихся проведением институциональных преобразований.